ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ապրիլի 2026 թվականի N 190- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՇՈՒՌՆՈՒԽԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԼԱԲԵԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով ՀՀ Սյունիքի մարզի «Շուռնուխի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) տնօրեն Արմենակ Լալաբեկյանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու հարցը՝

պ ա ր զ ե ց ի՝

2023-2024թթ՝ հաշվետու ժամանակաշրջանի համար «Փըրֆեքթ աուդիտ» ՍՊ ընկերության կողմից Կազմակերպությունում իրականացված ներքին աուդիտի արդյունքում 2025 թվականի սեպտեմբերի 29-ին կազմված և հաջորդ օրը հաստատված թիվ 23 աուդիտորական հաշվետվությամբ արձանագրվել են 3 (երեք) խախտումներ: Նշվածի կապակցությամբ 2026 թվականի մարտի 12-ին գրություն է ուղարկվել Կազմակերպություն՝ խախտումների պատճառների և դրանք վերացնելու ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ գրավոր բացատրություն ներկայացնելու նպատակով:

Ի պատասխան վերը նշված գրության՝ Կազմակերպության տնօրեն Ա՝ Լալաբեկյանը 2026 թվականի ապրիլի 16-ի գրությամբ հայտնել է, որ թիվ 23 աուդիտորական հաշվետվությամբ արձանագրված երեք խախտումներից մեկի վերացման ուղղությամբ տարվում են համապատասխան աշխատանքներ, ինչը վկայում է այն մասին, որ 2026 թվականի ապրիլի 16-ի դրությամբ Կազմակերպությունում առկա խախտումներն ամբողջությամբ վերացված չեն և կրում են շարունակական բնույթ:

Ասվածին, 2026 թվականի ապրիլի 16-ին հայտնաբերվել է, որ Կազմակերպությունում

հաշվառման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների պահպանման մասով:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը (տնօրեն, նախագահ, ռեկտոր և այլն):

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ պետական կազմակերպության գործադիր մարմինը օրենքով, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով, պետական կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է պետական կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, պետական կազմակերպության կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Կազմակերպության տնօրեն Ա Լալաբեկյանի հետ կնքված N 2 աշխատանքային պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 22 կետի «դ» ենթակետի համաձայն՝ տնօրենը պարտավոր է պատշաճ մակարդակով իրականացնել Կազմակերպության ընթացիկ ղեկավարումը՝ Կազմակերպության կանոնադրությանը և պայմանագրին համապատասխան:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 20-րդ մասի 20-րդ կետի համաձայն՝ դպրոցի տնօրենն ապահովում է լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը: Նույն հոդվածի 21-րդ մասի համաձայն՝ պետական ուսումնական հաստատության տնօրենը օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկողություն իրականացնող մարմինների արձանագրած՝ նույն հոդվածի 20-րդ մասով, օրենսդրությամբ և ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթների, օրենքների, հիմնադրի, նախարարության, լիազորված մարմնի և խորհրդի որոշումների և կնքված պայմանագրերի պահանջների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, այդ թվում՝ մանկավարժական աշխատողների իրավունքների և ազատությունների պաշտպանության, սովորողների և աշխատողների կյանքի, առողջության պահպանման համար:

Պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի տնօրենից պահանջելու ներկայացնել հաշվետվություն Կազմակերպության ընթացիկ գործունեության մասին:

Կազմակերպության տնօրեն Ա. Լալաբեկյանի 2026 թվականի ապրիլի 16-ի գրության մեջ առկա չէ որևէ նշում Կազմակերպությունում արձանագրված խախտումների, ինչպես նաև գրավոր բացատրություն ներկայացնելու համար տրամադրված եռօրյա ժամկետի խախտման պատճառների վերաբերյալ:

Հիմք ընդունելով վերը նշված փաստերը, Կազմակերպության կանոնադրությունը, Պայմանագիրը, Կազմակերպության տնօրեն Ա. Լալաբեկյանի գրավոր բացատրությունը և ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 218-րդ և 220-րդ հոդվածների 1-ին մասերով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 224-րդ և 226-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի «բ» կետով,

ո ր ո շ ու մ ե մ.

Կազմակերպության տնօրեն Արմենակ Լալաբեկյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2026-04-16 17:38:33 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2026թ. ապրիլի 16
ք. Կապան